

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09
վիճակագրության պետական խորհրդի նիստի

03.08.2009թ.

ժ.11: 00

Մասնակցում էին՝

Ս.Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ.Գևորգյան, Յու.Պողոսյան, Ա.Շաբոյան, Ս.Դավթյան, (*Խորհրդի անդամներ*)

Հ. Գրիգորյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ.Պետրոսյան (վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ), Լ.Խաչատրյան (իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ, բաժնի պետի պաշտոնակատար), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ):

Օրակարգի նախագծում՝ երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

2. Այլ հարցեր:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բվեարկության արդյունքները-կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների անվանագերծված տվյալների բազաները ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2004-2008 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքում ձևավորված անվանագերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

/Անհատական/

/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ